ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 93
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07-ը նոյեմբերի 2026թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Ա. Հ. Մակարյանը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)
2. ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:
(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)
3. *Ընթացիկ հարցեր:*

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ընտրության հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը:

Տնօրենը նշեց, որ համաձայն ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի 25.09.2026թ. N 92/4 որոշման և իր 01.10.2026թ. N 148-§1 հրամանի՝ սահմանված կարգով հայտարարվել էր մրցույթ Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի տեղակալման համար: Շահերի բախումից խուսափելու նպատակով փաստաթղթերի ընդունումը և կազմակերպչական աշխատանքները տնօրենի հրամանով վերապահվել էին տնօրենի խորհրդական Ա. Մակարյանին, ինչն ապահովել է գործընթացի լիակատար թափանցիկությունն ու անաչառությունը: Մ.Օթարյանը հայտնեց, որ սահմանված ժամկետում ինքնառաջադրմամբ դիմում է ներկայացրել ֆ.մ.գ.թ., դոցենտ Միհեր Սերգեյի Աթոյանը, ով երկար տարիներ արդյունավետորեն իրականացրել է ֆակուլտետի փոխդեկանի, ամբիոնի վարիչի, գիտական քարտուղարի վարչական աշխատանքները և ունի ծանրակշիռ գիտամանկավարժական փորձ: Տնօրենը հաստատեց, որ թեկնածուի փաստաթղթերի փաթեթը լիովին համապատասխանում է ընթացակարգով սահմանված բոլոր պահանջներին (գիտական աստիճան, դոցենտի կոչում, 5 տարուց ավելի ստաժ) և ձայնը տրամադրեց Մ. Աթոյանին՝ ծրագրային ելույթի համար:

Միհեր Աթոյանը, ներկայացնելով ԵՊՀ ԻՄ Բնական գիտությունների ֆակուլտետի 2026–2031 թթ. զարգացման իր ծրագիրը, նշեց, որ այն ծավալուն և հավակնոտ ռազմավարական փաստաթուղթ է՝ կառուցված կրթության որակի շարունակական բարելավման, գործնական ուսուցման, լաբորատոր ենթակառուցվածքների ընդլայնման և աշխատաշուկայի ու տարածաշրջանի կարիքներին արձագանքելու տրամաբանությամբ: Զեկուցողը շեշտեց, որ ծրագրի մշակման հիմքում ընկած են ֆակուլտետի երկու ամբիոնների

առկա ներուժը, Erasmus+ ծրագրի շրջանակում Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրի բարեփոխման գործընթացը, գործող ռոբոտատեխնիկայի լաբորատորիան, ֆակուլտետի 3D տպագրության, CNC և այլ սարքավորումները և Տավուշի մարզում բնագիտական ու տեխնոլոգիական կրթության զարգացման անհրաժեշտությունը։

Հաղորդման հիմնական դրույթները և ռազմավարական առաջնահերթությունները ներկայացվեցին հետևյալ ուղղություններով.

• **Կրթական ծրագրերի արդիականացում և ուսանողակենտրոնություն**. Erasmus+ ծրագրի շրջանակներում Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագրում համադրվելու են հիմնարար մաթեմատիկան, ծրագրավորումը և Python-ի, տվյալների վերլուծության (Data Science), ալգորիթմների, մաթեմատիկական մոդելավորման ու արհեստական բանականության (AI) ներածական գործիքները։ Ուսանողների առաջադիմության բարձրացումը հիմնվելու է պահանջկոտության, խորհրդատվությունների, առաջին կուրսեցիների հարմարվողականության աջակցման և մասնագիտական պորտֆոլիոյի ձևավորման վրա։

• **Շրջանավարտներ և SS մենթորներ.** Նախատեսվում է ձևավորել շրջանավարտների հետ կապի թարմացվող ցանց և առաջին երկու տարիներին ներգրավել 10–15 ակտիվ SS մասնագետ-մենթորների, ովքեր կանցկացնեն հանդիպումներ, կաջակցեն ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ու պորտֆոլիոների քննարկմանը։

• **Ուսանողական տեխնոլոգիական թիմեր.** Խթանվելու է 4–6 ուսանողից բաղկացած 5–10 միջառարկայական թիմերի ձևավորումը, որոնք դասախոսների և ոլորտային մասնագետների ղեկավարությամբ կաշխատեն 15–20 իրական կամ ուսումնական ծրագրային ու տեխնոլոգիական նախագծերի վրա (Git/GitHub, կայքեր, հավելվածներ, ռոբոտատեխնիկա)։

• **Լաբորատոր ենթակառուցվածքների զարգացում.** Ապահովվելու է Erasmus+ ծրագրով ստեղծված ռոբոտատեխնիկայի լաբորատորիայի լիարժեք օգտագործումը (ներառյալ բաց դռների օրեր դպրոցականների համար)։ Փուլային եղանակով նախատեսվում է ստեղծել Արհեստական բանականության, տվյալների գիտության և ծրագրավորման երկրորդ լաբորատորիան։

• **«ԵՊՀ Արվեստանոց» և 3D տպագրություն.** Կիրառական արվեստի ֆակուլտետի հետ համագործակցությամբ 3D տպագրության, CNC փորագրման և կանաչ տեխնոլոգիաների սարքավորումները կօգտագործվեն եռաչափ մոդելավորման, հուշանվերների նախատիպերի պատրաստման և միջառարկայական ծրագրերի իրականացման համար։

• **Դասախոսական կազմի զարգացում և գիտահետազոտություն.** Ֆակուլտետի երկարաժամկետ կայունության համար կգնահատվեն ամբիոնների կադրային կարիքները, կներգրավվեն երիտասարդ մասնագետներ, կկազմակերպվեն վերապատրաստումներ, իսկ ամբիոններին կտրամադրվի աջակցություն՝ տարեկան 3–5 դրամաշնորհային կամ համագործակցային հայտեր պատրաստելու համար։

• **Դպրոցներ, դիմորդներ և գործընկերություն.** Դպրոցների հետ աշխատանքը կրելու է շարունակական բնույթ (տարեկան շուրջ 6 բաց լաբորատոր օրեր և 8–10 գործընկեր դպրոցներ)։ Գործատուներին և ոլորտային մասնագետներին նախատեսվում է ներգրավել նախագծերի և պորտֆոլիոների քննարկումներում։

• **Հեռավար կրթություն և ռիսկերի կառավարում.** Ներկայացվեց հեռավար/խառը ուսուցման մոդուլների ներդրման 3-փուլանոց ճանապարհային քարտեզը (2026–2031թթ.)։

Զեկուցողն անդրադարձավ 6 հիմնական ռիսկերին և դրանց պահուստային լուծումներին (փուլային բյուջետավորում, անվճար ծրագրային գործիքներ, հեռավար մենթորություն, ինքնարժեքի ճշգրիտ հաշվարկ)։

Մ. Աթոյանի ծրագիրը կարող եք տեսնել հավելված 1-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի բնագիտության ամբիոնի դոցենտ Գ. Սիմոնյանը, Ռ. Յոլչյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վ. Ավագյանը և այլք։

Տնօրեն Մ. Օթարյանը նշեց, որ ծրագիրը բովանդակալից է, սակայն բանավոր խոսքում բավարար չափով չանդրադարձվեց այլ բուհերի համանման բաժինների հետ համագործակցությանը, ինչը կարևոր է ֆակուլտետի զարգացման համար։ Նա առաջարկեց դպրոցների հետ համագործակցության ցանկում անպայման ներառել նաև քոլեջները։ Տնօրենը պարզաբանեց «Կանաչ համալսարան» հայեցակարգի էությունը՝ ընդգծելով, որ Բնական գիտությունների ֆակուլտետը պետք է առաջատար դեր ստանձնի թվային կրթական վերջնարդյունքների ներդրման գործում։ Նա հարց բարձրացրեց նաև 3D տպագրության սարքավորումների օգտագործման և հեռակա ուսուցմամբ նոր մասնագիտությունների պլանավորման վերաբերյալ։

Գ. Սիմոնյանը և խորհրդի անդամները հետաքրքրվեցին ռոբոտատեխնիկայի լաբորատորիայի լիարժեք ծանրաբեռնվածության, 3D տպիչների ու CNC սարքավորումների կիրառման հնարավորությունների և դասախոսական կազմի վերապատրաստումների վերաբերյալ։

Մ. Աթոյանը, պատասխանելով բարձրացված հարցերին, նշեց, որ այլ բուհերի հետ առկա են համագործակցության հուշագրեր, որոնք կիրառվելու են նախագծային աշխատանքներում։ Նա պարզաբանեց, որ 3D տպագրության և CNC սարքավորումները Կիրառական արվեստի ֆակուլտետի հետ համատեղ կիրառվելու են «ԵՊՀ Արվեստանոց»-ում՝ թվային մոդելավորումը, դիզայնն ու կիրառական արվեստը համադրելու նպատակով։ Մ. Աթոյանը նաև տեղեկացրեց, որ քննարկվում են հեռակա ուսուցմամբ լրացուցիչ մասնագիտության ներդրման հնարավորությունները։

Օրակարգի երկրորդ՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ընտրության հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը։

Տնօրենը նշեց, որ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար սահմանված ժամկետում դիմում է ներկայացրել բ.գ.թ., դոցենտ Վահան Արշակի Աղաբաբյանը, ով ներկայումս հանդիսանում է ֆակուլտետի դեկանի պաշտոնակատարը։ Մ. Օթարյանը ընդգծեց Վ. Աղաբաբյանի երկարամյա փորձը բուհական համակարգում (դեկանի տեղակալ, բաժնի վարիչ, ընդունող հանձնաժողովի քարտուղար) և նրա նշանակալի ներդրումը ֆակուլտետի ուսումնական ու ստեղծագործական միջավայրի զարգացման գործում։ Տնօրենը հաստատեց, որ թեկնածուի փաստաթղթերի փաթեթը համապատասխանում է մրցույթի պահանջներին և ձայնը տրամադրեց Վ. Աղաբաբյանին։

Վահան Արշակի Աղաբաբյանը, ներկայացնելով ԵՊՀ ԻՄ Կիրառական արվեստի ֆակուլտետի 2026–2031 թթ. զարգացման իր ծրագիրը, ընդգծեց, որ ծրագիրը հիմնված է 3 փոխկապակցված առանցքային գաղափարների վրա՝ որակյալ կրթություն, ստեղծագործական միջավայր և Տավուշի մարզի մշակութային ու տնտեսական ներուժի հետ

կենդանի կապ («Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» բակալավրիական ծրագրերում)։ Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի հիմնական նպատակն է ձևավորել ժամանակակից, մրցունակ, բաց և պատասխանատու ակադեմիական միջավայր, որը պահպանում և վերաիմաստավորում է ազգային մշակութային ժառանգությունը ժամանակակից արվեստի ու դիզայնի լեզվով։

Ծրագրի հիմնական դրույթները և ռազմավարական ուղղությունները ներկայացվեցին հետևյալ բաժիններով.

• **Կրթական ծրագրեր և նախագծային ուսուցում.** Կրթական ծրագրերը պետք է սերտորեն կապվեն իրական մասնագիտական առաջադրանքների հետ։ Նախատեսվում է ուժեղացնել նախագծային ուսուցումը, գործնական դասերը, անհատական խորհրդատվությունը և ուսանողական պորտֆոլիոների ձևավորումը ուսումնառության առաջին տարիներից, որպեսզի յուրաքանչյուր ուսանող ավարտելիս ունենա ոչ միայն դիպլոմ, այլև որակյալ մասնագիտական պորտֆոլիո (գեղարվեստական ստեղծագործություն, դիզայներական նախագիծ, ցուցահանդես)։

• **Ակադեմիական բարեվարքություն և արհեստական բանականություն (AI).** Առանձնահատուկ տեղ է տրվում ակադեմիական բարեվարքությանը, հեղինակային իրավունքի մշակույթին և AI գործիքների պատասխանատու կիրառմանը։ Արհեստական բանականությունը դիտարկվում է որպես գաղափարների մշակմանն ու պատկերավորմանն օժանդակող գործիք, որը, սակայն, չի կարող փոխարինել ուսանողի անհատական ստեղծագործական ընդունակություններին և հեղինակային ձեռագրին։

• **Դիմորդների ներգրավում և մասնագիտական կողմնորոշում.** Տավուշի և հարակից մարզերի դպրոցների ու քոլեջների համար նախատեսվում է ձևավորել դիմորդի ստեղծագործական կողմնորոշման փաթեթ, կազմակերպել «Բաց արվեստանոց» օրեր, վարպետաց դասեր, դպրոցական ստեղծագործական մրցույթներ և ընդունելության «Գծանկարչություն» ու «Կոմպոզիցիա» քննությունների նախապատրաստական աշխատարաններ։

• **Արվեստանոցների զարգացում և «ԵՊՀ Արվեստանոց».** Առաջարկվում է յուրաքանչյուր արվեստանոցի համար (գծանկար, գունանկար, տեքստիլ, հագուստի մոդելավորում, խեցեգործություն, քանդակ, մետաղի և փայտի մշակում) ունենալ «զարգացման անձնագիր» (գույք, սարքավորումներ, անվտանգություն, տարեկան առաջնահերթություններ)։ «ԵՊՀ Արվեստանոց»-ը զարգացվելու է որպես ուսումնական, ստեղծագործական և մասնագիտական գործունեությունը միավորող հարթակ (որտեղ արդեն իսկ 21 ուսանողներ ակտիվ մասնակցում են պատվերների կատարմանը և ստանում վարձատրություն)։

• **Կիրառական հետազոտություններ և Տավուշի մշակութային ժառանգություն.** Ձևավորվելու է «Տավուշի նյութական մշակույթը և ժամանակակից դիզայնը» հետազոտական ուղղությունը, որի շրջանակում ուսումնասիրվելու են տեղական զարդանախշերը, ավանդական արհեստները, եկեղեցիների դեկորները, կենցաղային առարկաները և դրանց ժամանակակից կիրառման հնարավորությունները։ Ուսանողների ավարտական նախագծերը կուղղվեն Տավուշի մարզի, սահմանամերձ բնակավայրերի, արվեստի տների, դպրոցների ու մասնաճյուղի տարածքների դիզայներական լուծումներին։

• **Գործընկերություն, պրակտիկա և օնլայն վաճառք.** Նախատեսվում է խորացնել կապերը թանգարանների, մշակութային կենտրոնների, զբոսաշրջային

կազմակերպությունների, համայնքապետարանների և տեղական արտադրողների հետ: Ուսանողական ու ֆակուլտետային աշխատանքների իրացման համար առաջարկվում է ինֆորմատիկայի մասնագիտության հետ համատեղ ստեղծել էլեկտրոնային կատալոգ և օնլայն վաճառքի հարթակ:

Վ. Աղաբաբյանի ծրագիրը ամբողջական կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, դոցենտ Վ. Ավագյանը, դոցենտ Հ. Ասատրյանը և խորհրդի անդամները:

Տնօրեն Մ. Օթարյանը արտահայտվեց թեկնածուի ելույթի վերաբերյալ՝ բարձր գնահատելով ֆակուլտետի ստեղծագործական մթնոլորտը: Նա տեղեկացրեց, որ մասնաճյուղի 1-ին հարկում հատուկ միջոցներ են հատկացվել նոր ցուցասրահի վերանորոգման համար, որտեղ ցուցադրվելու են նաև ուսանողների ու շրջանավարտների աշխատանքները: Տնօրենը նշեց, որ անձամբ բանակցել է համայնքապետերի հետ՝ ուսանողական աշխատանքների վաճառքն ապահովելու նպատակով, և առաջարկեց Ինֆորմատիկա մասնագիտության հետ համատեղ ստեղծել էլեկտրոնային կատալոգ ու օնլայն վաճառքի հարթակ: Մ. Օթարյանը հատուկ ընդգծեց ֆակուլտետում ուսանողական կարգապահության խստացման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացրեց մասնաշենքերի ընթացիկ վերանորոգման և ջեռուցման համակարգի գործարկման ընթացքը:

Արտահայտվողները նշեցին, որ ներկայացված ծրագիրը համարձակ է և հրապուրիչ: Նրանք հետաքրքրվեցին ծրագրի իրականացման նախադրյալներով, Տավուշի մարզի մշակութային ժառանգության (տարազներ, զարդանախշեր, եկեղեցիների դեկորներ) ուսումնասիրությամբ և առաջարկեցին ֆակուլտետում առանձնացնել մշտական ցուցադրության տարածք:

Թեկնածու Վ. Աղաբաբյանը, պատասխանելով դիտարկումներին, պարզաբանեց, որ ծրագիրն իրատեսական է, քանի որ «ԵՊՀ Արվեստանոց»-ում արդեն 21 ուսանողներ ակտիվ մասնակցում են պատվերների կատարմանը և վարձատրվում են: Նա նշեց, որ ավարտական նախագծերը կազմվում են տեղական մշակութային ժառանգության հիման վրա, և պատրաստակամություն հայտնեց Ինֆորմատիկայի բաժնի հետ համատեղ մշակել օնլայն վաճառքի հարթակը:

Թեկնածությունների քննարկումից հետո, «ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի» 21-րդ կետի համաձայն, Գիտական խորհրդի բաց քվեարկությամբ (31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) ձևավորվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.
1. Ա. Հ. Մակարյան — հանձնաժողովի նախագահ (տնօրենի խորհրդական)
2. Ա. Ց. Դավթյան — հանձնաժողովի անդամ (ՈՒՄՎ պետ)
3. Նարեկ Շահնազարյան — հանձնաժողովի անդամ (ՈՒԽ ներկայացուցիչ)

Փակ, գաղտնի քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մակարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Գիտական խորհրդի 35 անդամներից նիստին ներկա էր 31-ը: Բաժանվել է 31 քվեաթերթիկ, քվեատուփում առկա էր 31 քվեաթերթիկ:

1. Սիեր Սերգեյի Աթոյան (Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ընտրություն). Կողմ՝ 31, Դեմ՝ 0, Անվավեր՝ 0 (միաձայն կողմ):
2. Վահան Արշակի Աղաբաբյան (Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ընտրություն). Կողմ՝ 30, Դեմ՝ 1, Անվավեր՝ 0:

Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն (31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) ընդունեց հետևյալ որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ № 93/1

1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը (Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ)։

2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով (կողմ՝ 31, դեմ՝ 0, անվավեր՝ 0) Մհեր Սերգեյի Աթոյանին ընտրված համարել ԵՊՀ ԻՄ Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ 5 (հինգ) տարի ժամկետով։

3. Սույն որոշումը և ընտրության փաստաթղթային փաթեթը ներկայացնել ԵՊՀ ԻՄ տնօրենին՝ սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու համար։

ՈՐՈՇՈՒՄ № 93/2

1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը (Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ)։

2. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով (կողմ՝ 30, դեմ՝ 1, անվավեր՝ 0) Վահան Արշակի Աղաբաբյանին ընտրված համարել ԵՊՀ ԻՄ Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ 5 (հինգ) տարի ժամկետով։

3. Սույն որոշումը և ընտրության փաստաթղթային փաթեթը ներկայացնել ԵՊՀ ԻՄ տնօրենին՝ սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու համար։

Գիտական խորհրդի նախագահ՝_____ **Մ. Մ. Օթարյան**

Գիտական խորհրդի նիստի քարտուղար (լիազորված անձ**)՝** _____**Ա. Հ. Մակարյան**